

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԱՊԱՇԽԱՐՈՒԹԵԱՆ ՕՐԵՐԻՆ

Տեսել էք Դուք, երբեմն ծաղկած, շէն ու բերրի երկիրը աւերակների փոխուած, մարդաշատ քաղաքը ամաշացած, հոյակապ տաճարը փլատակների փոխուած. ի՞նչ մտքեր, զգացմունքներ են լցուում մեր հոգին այդ փառքից ընկած, խեղճութեան մատնուած տեսարանի հանդէպ:

Ափսոսանքի, կարեկցութեան, բարոյական պարտականութեան, օգնութեան գնալու, աւերակը վերականգնելու, անապատը կրկին ապատ դարձնելու: Բողոքի—զայրոյթի զգացումը այն թշնամու դէմ, որ մարդու աշխատանքի արդիւնքն է ոչնչացրել, շատ շատերին երջանկութիւն տուող, բախտաւորեցնող աղբիւրներն է ցամաքեցրել:

Եւ ի՞նչ տեսարանի ամենից շատ ու զրեթէ ամենուր կարող ենք հանդիպել, քան աւելի ու աւելի ծաւալուող, հրդեհուող այս մեծ պատերազմի աւերածութիւններին:

Կա՛յ մէկը, որ տեսած չլինի իր աչքով երբեմն շէն, այժմ ամայի դարձած վայր. կա՛յ մէկը, որը կորցրած չլինի իր մօտիկին, հարազատին. կա՛յ մէկը, որ կորուստ ունեցած չլինի մեր վերջին դատաստանի նախօրեակը գուշակող այս պատերազմին:

Ո՛րքան աշխատանք, ջանք ու ճիգ է պէտք մեր տարիների արիւն բրտինքով ձեռք բերածը վերականգնելու համար, մեր ուրախութեան, յառաջագիւծութեան միջոցաղբիւրները վերակենդանացնելու:

Եւ մեր աչքի առաջ կատարւում է այդ վերաշինութեան սկզբնական աշխատանքը: Դուք տեսնում էք, որ իրար ետեից կազմւում են զանազան մասնախմբեր, յանձնաժողովներ՝ աւերակները մաքրելու, ամայութեան մէջ կեն-

դանութիւն մտցնելու, մոխիրների մէջ թագնուած կայ-
ծերը բանալու, ցուրտ ու մութ աշխարհում կրկին լոյս
ու ջերմութիւն տարածելու:

Մարդու ապագայի հաւատը, այդ տոկունութիւնը,
դժուարութիւնները յաղթահարելու յամառութիւնը մեզ
ուրախացնում է, յոյս է ներշնչում կրկին տեսնելու մեր
ունեցածը, դարձեալ ունենալու, ձեռք բերելու մեր կոր-
ցրածը, եթէ ոչ լիովին, գոնէ կիսով չափ:

Այս զգացումը մեզ ոգևորում է, մեզ ոյժ է տալիս
աշխատելու, դանութիւնները թէև դժուարութեամբ, մեծ
տանջանքով, բայց առանց յուսահատութեան տանելու:

Եթէ մենք մի կողմից տրտմել, միւս կողմից ուրա-
խանալ գիտենք մեր ունեցածը կորցնելու, մեր տունը,
մեր որրանը քանդուած տեսնելու դէպքում, հապա ի՞նչ
ենք անելու մեր այն կորուստների, այն աւերակների
համար, որ չեն երևում, որոնց չենք տեսնում, բայց որոնք
մեր մէջ կան, գոյութիւն ունին: Մեր նիւթական մեծ կո-
րուստներին կից մեր հոգու աշխարհն է աւերուած, մեր
ներքին բարոյական երկիրը քարուքանդ եղած:

Սոսկալին այն նիւթական կորուստները չեն, որոնց
թիւր օրէ օր առայժմ աճում է, բայց մի օր կանգ կառնի
անշուշտ և որոնց հաշուել, գնահատել, թւերի վերածել կա-
րող ենք:

Սոսկալին մեր հոգու աշխարհում տեղի ունեցող աւե-
րածութիւններն են, որոնք ոչ մի չափի, ոչ մի թւի, արժէքի
չեն վերածւում, բայց որոնց թիւր նայնալէս օր է օր ա-
ճում է ու շգիտենք վերջ կլինի այդ աւերին ու երբ կգայ
այդ օրը:

Պատեցէք պատերազմի վայրից մազապուրծ եղած-
ների, թէ պատերազմի դաշտում կուրծքը դէմ տուողների,
թէ նոյն իսկ թիկունքում համեմատաբար աւելի անվտանգ
ու անկորուստ կեանք վարողների մէջ ու հարցրէք ի՞նչ
սոսկումներ են կատարւում նրանց հոգիներում, ի՞նչ փլա-
տակներով են ծածկւում նրանց բարոյական կառուցուած-
ները:

Ո՞վ մեզանից այժմ ազատ է խղճի անողոր, անդադրում, անիրաւ դատաւորի այրու յամառութիւնն ունեցող պահանջից:

Մէկը իւր գաւակին է գետը նետել իւր կեանքն ազատելու մղումից գերուած, մէկը ընկերոջն է կիսակենդան թողել պատերազմի դաշտում ու իրեն ազատել, միւսը իւր հայրենիքն է դաւաճանել, երրորդը անտուն անտէր գաղթականին է գլացել մի պուտ ջուրը, չորրորդը հրէտանու որոաների տակ կեանքը դո՛հ բերող գինուորին այս ու այն ձևով օգնութեան գալու պարտքը չէ կատարել և այսպէս անվերջ, անսահման:

Մի կողմից խիզախանալու, բարոյապէս մեծանալու, ընկերոջը անձի շափ սիրելու պարզորոշ պահանջներն են այժմ մեր առաջ, միւս կողմից մեր պարտականութիւնները լրիւ չկատարելու, մեր բարոյական աշխարհը այլանդակելու տխուր տեսարանն է պատկերացած:

Արտակարգ ժամանակում զոհողութիւնը արտակարգ է լինելու ոչ միայն նիւթականի, այլ մանաւանդ թէ բարոյականի կողմից: Բայց սրբան առաջինի նկատմամբ այնուամենայնիւ տանելի դրութիւն կայ, շնորհիւ անդադրում խօսքի՝ մամուլի պահանջի, բազմապիսի յանձնաժողովների, նոյնքան երկրորդը մոռացութեան է տրուած ու բայքայում աւելի է մեծանում:

Յիրաւի, հոգու թափով գինուած, սրտի տաքութեամբ լցուած, մտէք մեր ժամանակի մարդկանց սրտերը ու կտեսնէք աւերածութիւնների, փլատակների, մոխրակոյտերի աշխարհներ, շարքեր: Բարոյական կառուցուածքներն են հիմն ի վեր ընկնում ոչնչանում և նայող չկայ, հակող չենք տեսնում, ցաւողն անգամ պակասում է:

Եւ եթէ մեր քանդուած օջախը շէնցնելու համար, մեր կորցրած տնտեսութիւնը վերականգնելու նպատակով ունինք նիւթական միջոցներ, կազմում ենք յանձնաժողովներ, ընկերութիւններ. ի՞նչ ենք անում մեր բարոյական աշխարհի փլատակներից ազատուելու, մեր հոգու աշխարհը կրկին վերաշինելու համար:

Անկասկած է, որ մեզանից ամեն մէկի մէջ կայ պահանջ մեր արածը քննելու, գնահատելու, մեր կատարածը լաւ կամ վատ ածականով որակելու:

Եւ ո՞վ է այն հողածինը, որ շունի մեղքի գիտակցութիւնը, ո՞րն է այն մարդը որ չի գգում իւր խղճի մաքրութեան պէտքը, որը չի տանջւում, չի գալարւում մենութեան ժամին իւր բարոյական կատարելութեանը չհասնելու համար:

Ժխտել ոչ ոք չի կարող, ով ուզում է լինի, գիտնական թէ տգէտ, հարուստ թէ աղքատ, եթէ նա մարդ անունն է կրում իւր վրայ, որ ինքը մեղքի զգացում ունի, որ ինքը իւր խղճի առաջ, ամեն դէպքում ու միշտ էլ արդար չէ:

Մանաւանդ այժմ երբ մեզ վրայ պարտականութիւններն օրէցօր են աւելանում, իսկ նիւթական բարեկեցութեան կրքոտ տենչը անշագօրէն մեզ լափում, կլանում է:

Կայ մեղքի՝ ասել է թէ պարտականութիւնը չկատարելու, բարոյապէս առաջ չգնալու կիսաճանապարհին մնալու զգացումը: Այդ զգացումը տանջանքը ինքն է: Իսկ ո՞վ կազատէ մեզ այդ անեղ գատաւոր խղճի խայթից, մեղքի ծանրութիւնից, բեռից:

Ոչ մի դրամական ժողովարարութիւն, ոչ մի յանձնաժողով, ընկերութիւն այս դէպքում ոչինչ չի կարող անել: Մարդկայինը այդտեղ տկար է, թոյլ:

Եւ քրիստոնէի առաջ այս դէպքում Փրկչի պայծառ լուսաշող դէմքն է պատկերանում, որ հայրական կաթոգին ձայնով ասում է «Եկայք առ իս ամենայն վատտակեալք և բեռնաւորք և ես հանգուցից գձեղ»:

Բարոյական վերածնութեան Մեծ վարդապետի կոչն է միակ ուղիղ ճանապարհը, որ մեղքի, կապարի ծանրութիւն առած գիտակցութիւնից, Կայէնի երերեալ դրութեան հասած մարդուն վերածնւելու՝ բարոյապէս վերակազմւելու է առաջնորդում:

Ով գգում է իւր կատարեալ մարդ չլինելու դրութեան ծանրութիւնը նա կհասկանայ ինչ ասել է ապաշխարելը, ինչ ասել է մեղքի գիտակցութիւնից ազատւելու ձգտելը:

Ապաշխարութեան համար ճանապարհները շատ են, բազմապիսի. ապաշխարութիւնը այն բովն է ուր մաքրւում, զտւում է հոգին, ուր աւելորդ կեղտ-տարրերը ոչնչանում են ու կենսական մաքուրը երևան է գալիս:

Ապաշխարութիւնից ազատ չէ նա, ով գիտէ ձգտել կատարելութեան. ապաշխարութեան ուղին այժմ ամենից աւելի պահանջ է դարձած մեզ համար. որովհետեւ անթիւ անհամար պարտք ունինք կատարելու, բայց չենք կատարում, որովհետեւ մեր առաջ ծանր, ամնջալի ճամբայ կայ և մեզ հարկաւոր է ոյժ, եռանդ այդ ուղին անցնելու:

Մըտեղ կդանէ տառապող, որոնող հոգին իւր խղճի հանդիստը, եթէ ոչ Մեծ վարդապետի մօտ, նա որը ա-նառակ որդուն ներել, պոռնիկ կնոջը շղատապարտել ու երկուսին էլ վերածնութեան տանել կարող էր:

Փնտրեցէք խղճից հալածուողների, բարոյապէս տանջուողների, մեղքի ծանրութեան տակ ընկճուողների համար աւելի լաւ կայան քան եկեղեցին է ու չէք գտնի, չէք ցոյց տայ:

Մտէք ապաշխարութեան օրերին՝ մեծի պահոց ժամանակ մեր եկեղեցին և կտեսնէք, որ տարադիր, աստանդական, խղճից հալածուած, որոնող, փնտրող ու յուսախաբուող, նորից որոնումի ելնող հայ մարդու համար մեր երանելի նախնիքները հրաշակերտել են իրենց սրտի, մաքի աննման գանձեր՝ շարականների, սաղմոս-աղօթքների, ընթերցուածների ապաշխարութեան աննման կերտուածքը ժամերգութիւնը:

Քաջութիւն ունեցէք մի անգամ ձեր աչքից կասկածամտութեան, թերահաւատութեան քօղը դէն ձգելու և բաց աչքով նայելու, անխարդախ սրտով մեր եկեղեցին մտնելու ապաշխարութեան օրերին և եթէ դուք յարատե կատարելութեան ձգտող էք, եթէ դուք ձեր արածը գիտէք գնահատել անաշառ, եթէ դուք ձեր ընկերոջը ձեր շափ սիրելու պահանջն ըմբռնէք, դուք անշուշտ կմխիթարւէք, կհանգստանաք, ձեր աչքերը կթրջուին հոգու աննման վերածնութեան ազդանշան արցունքներով, ձեր հոգին կբարձրանայ, կմաքրուի, կզտուի:

Հայ մարդու տառապանքն անլուր է, անպատում ու նա ոչ մի տեղ չի կարող իւր հոգու մխիթարութիւնը այնպէս սիրուն, այնպէս քնքոյշ, լիառատ, անկաշկանդ գտնել, որքան հայ եկեղեցում-ապաշխարութեան օրերին:

Մտէք մեր եկեղեցին, մտէք համարձակ, բաց սրտով ու ձեր հոգու թախիժը կշքանայ, ձեր անհատնում վիշտը կամոքուի: Մեր սուրբ հայրերի հոգերուդիւ ակունքների հրաշակերտ շարքեր-շարականները լսէք, մեր կատարելութեան ձգտող Նարեկացի հայրերի աղօթքներին ականջ դրէք, աստուածախօս մարգարէների քարոզները ի միտ առէք ու կվերածնւէք, կամոքւիք, կհանգստանաք:

Մի մոռանաք, որ մեր առաջ դեռ շատ շատ գործ կայ անելու, իսկ դրա համար բարոյական աշխարհի կորով է պէտք:

Գնանք եկեղեցի, ապաշխարութեան օրերին մաքրենք մեր հոգին և ոյժ առնենք, բարոյական ոյժ մեծ գործի համար:

Գ. ա.

